

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.05.2021թ. թիվ 2112750170 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<31>> 05 2021թ. 7-13 8729

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Ռոբերտ Բաբայանի ՄԴ/43166-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նիզամու փողոցի 1 շենքի 6 բնակարանի բնակիչ Ռոբերտ Բաբայանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112750170 որոշումը՝ նշելով, որ երեխայի հետ կանգնած կինը քայլ կատարեց դեպի ճանապարհի երթևեկելի հատված, որից հետո ծանր հետևանքներից խուսափելու համար արգելակել և կանգնեցրել է ավտոմոբիլը, սակայն տեսնելով, որ վերջինս մուտք չգործեց հետիոտնային անցման հատված, շարունակել է երթևեկությունը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>>28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին:

Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Նույն որոշման 19-րդ կետի համաձայն դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա:

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ գետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրմամբ պարզվել է, որ 04.05.2021թ. ժամը 17:25-ին Երևան քաղաքի Պարոնյան-

Լեռնայի փողոցների խաչմերուկի հատվածում առկա է «<Կանգ-գիծ>> գծանշումը, որն ակնհայտ և պարզ տեսանելի է և դիմումատուի կողմից այն հատելու պահին միացված է եղել լուսացույցի արգելող դեղին ազդանշանը:

Այսպես՝ տեսանյութի 17:25:58-րդ վայրկյանին միանում է լուսացույցի արգելող դեղին ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր «<Կանգ-գիծ>> գծանշման առջև դանդաղընթաց վիճակում: Դիմումատուի տրանսպորտային միջոցը «<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է տեսանյութի 17:25:59-րդ վայրկյանին, երբ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի արգելող դեղին ազդանշանը:

Փաստերի վերլուծության արդյունքում հերքվում է նաև «< կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջների ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն «<Կանգ-գիծ>> գծանշումը հատելուց առաջ գտնվել է դանդաղընթաց վիճակում, այսինքն դիմումատուն հնարավորություն է ունեցել կանգնելու առանց կտրուկ արգելակելու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ «< օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

«<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> «< օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Հարկ է նշել, որ կատարված ուսումնասիրության արդյունքում հերքվել է նաև իրավախախտումը երթևեկության այլ մասնակցի գործողության հետևանքով կատարված լինելու հանգամանքը:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ «< օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ «< օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.05.2021թ. թիվ 2112750170 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել «< վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ռոբերտ Բաբայանին:



Ե. Կարապետյան